Քիչ մ'ալ աչխէտիկ . . . — սիրալիր կին մը .
Յարդանք մի խնայեր , էնի՝ սիրելիս ,
Իմ սիրուհիս է ։ Ան խարտիշագեղ ,
Ան լեզակ աչքի սիրուն Լուսինաս՝
Որ երբեմն առ պատ կը կայթէր իրիկունն
Ըզ կայթ Փանտանկօ (1) ։ Համրէ՛ անոր ձեռք
Հարիւր հատ ոսկի իմ կողմէս եկած ։ —
Անոր քով ու կից կայ խուցի նըման
Աղաւնիկ խորշ մը 'յորում կը տեսնես
Կարմրափայլ քիթով խոշոր սաւան մը ,
Խոշոի հին թաղեայ խոյր մը ճակատէն
Մինչեւ յօնքն իջած՝ ուսոի առկախեալ
Կայ ողբերգապէս սարսուած սարսափած
Մեծ փետրաւել (2) մը , սըղոցէն վար չ'է՝
Երկանկէկ ժանդոտ մաշած սուսերը
Իւր վըտիտ մէջքը եւ կապերան կ'ուս ։ —
Տիւր այդ մորմրոսին(3) մեր կողմէն վեց հատ
Կըլոր գահեկան ։ — Անկէ քիչ մ'անդին՝
Փուռի պէս սեւուկ ծակ մը կը գտնես ,

---

(1) Սպանիական հոտաո մը որ երիտասարդ իմացող պիտի գիտնայ զայն ի'նչ է ։ (3) plumeau. (3) Մեծ-պահոց շաբաթներէն հարցնելու համար երդիքէն կախված 7 փետրով ոտիք։

Աշխարհաւանդ (1) մը քառուղւոյ (2) մ՚անկիւն
Ուր չ՚է պակաս երդ նրւագ ցայդ ցերեկ ։
Կանդուն կը խըմէ , անդուլ կը ծըխէ ,
Կենդանի մ՚որ հոն չատ կը յաճախէ ·
Խիտ հեզահամբոյր մարդ մըն է քնքուշ ,
Սեպուհ մ՚ոյր բերնէն երդում հայհոյանք
Երբէք չ՚է լսած · սրտակից է իմ
Որ կուլաթոռմպա անուանքն է ծանօթ ։
— Եռմուն հաւ ոսկի , եւ ըսէ իրեն՝
Թէ բոլոր փառք–հօր եւ հայր–մերի տեղ՝
Թող չուտուի խըմէ այս ղըրկածներըս ,
Եւ դեռ դալիք կայ ։ Տուր առանկ ամեն
Շաղաչուանների չըն կլորիկ ըստակդ ,
Եւ մի ապշելով բերանըդ բանար
Անոնց ապշելով բացած աչերուն ։

ՍՊԱՍԱԻՈՐԸ

Ցեռդ ։

ՏՕՆ ՍԻՋԱՐ

Մընացածն ալ քեզի պահէ ։
Եւ այս՝ հուսկ յոդուած ։

ՍՊԱՍԱԻՈՐԸ

Եւ ինչ հուսկ հրաման

Կու տայ տէրութիւնդ ։

ՏՕՆ ՍԻՋԱՐ

Գինովցիր , պընա ,
Դու պատարկապէրա · չատ կուժ կոտըրէ ,
Շատ աղմուկ հանէ , եւ մի պառնար տուն
Մինչեւ վաղ — պիշեր ։

---

(1) cabaret. (2) carrefour.

ՍՊԱՍԱՒՈՐԸ

Բաւե՛ք է , իշխանդ իմ։

(Դէպ ի դուռը կ'երկընայ զինկալիներ ընելով ։)

ՏՕՆ ՍԻՋԱՐ (Նայելով անոր փայլելը)

(առանձին)

Բայց սարսափելի տեսակէն գինով ։

(Ձանի եօթ կանչելով ։ Մէսօը կը դառնայ , կը ժպտինայ ։)

Ա՛հ . . . — Դուրս ելլանէ՝ պարապ պատօղք
Եսեւէդ տի՛ընկնին ։ Նայէ՛ որ գնացքովդ
Ըմպելեաց պահես պաուխն ու գիտնաս
Խըմածըդ վերցնել ։ Իբր այնիւ վարվէ ։
Քանի մը բառ պատահմամբ թէ որ
Խեչէդ (1) թափթըփի , թո՛ղ որ թափթըփի .
— Ու թէ որ անցնող դարձող հովկուըներ ,
Համեմաց փորձօղք , կըղերիկոսներ ,
Դպրոցի աշկերտք հաւքեն թափածը ,
Թո՛ղ տուր որ հաւքեն , եւ մի՛ սիրելիս
Ըլլար դժպըհի , խիստ դժուարամերձ
Մահկանացու մը . թէ որ պրպտէդ
Անպատմ մէկ քանին առնուն , մի խօսիր ,
Լո՛ւր ներօղամիտ ։ Անոնք ալ մարդ են
Մեզի պէս ։ Նաեւ խակ պարտ է նայէ —
Ամենուս համար է տոյն օրէնքը , —
Այս փուշ ու փորձանք աշխարհիս վրայ
Տալ քիչ մը խնամուս հէք արարածոյ ։

(Խոխձուռնեամբ)

---

(1) chausses.

Օր մը՝ ան թերեւս այդ ամեն տրեանք
Կախաղան ելլին. ուստի ունենանք
Մենք առանց համար այն պատկառանքն որ
Ան՛նկ է այդպիսեաց։ — Ա՛լ գընա բանըդ։

(Սպասաւորը կը դնէ կ'երթայ։ Մինակ ձեալով՝ պօն Սէզար կը նայի ապտէկայեց [1] է սեղան և խորհրդածու-
ընեանց դէմ ընկղմելու կ'երթայ։)

Թէ քրիստոնէին եւ թէ իսմասնային
Պարտ է լսել ի կիր առնուլ իր դանձը։
Էն՛ն քիչ ուժ օրհան ապրելիք ունիմ,
Զայն լսե՛ւ ու ապրիմ։ Ու թէ որ քիչ մ՛ալ
Ըստակ աւելնայ, ան՛ալ չերմեռանդ
Սուրբ հաստատութեանց համար գործ կ'ածեմ։
Բայց վստահութիւն չը դար կոր ներսէս,
Վախնամ իմ դանձըս ետ առնուն ձեռքէս։
Սրխալում մըն էր ատ՝ անտարակոյս.
Ան ծուռ ըրկվածը ծուռ լսած տ'ըլլայ,
Որուվ եւ ես ալ ծուռ արտասանած...

(Խոչի պոռոը կը քաշվի ներքեն։ Ներս կը մտնի պաշտօնեի
մը, պատառ սպիտակ մազերով. անոր հետեւէն [2], անոր
շղարշ [3], հովհարով։)

---

(1) accoudé. (2) basquine. (3) mantille.

Դ· ՏԵՍԻԼ

ՏՕՆ ՍԷԶԱՐ, ՏԱԾՈՒՀԻ ՄԸ.

ՏԱԾՈՒՀԻՆ (ինքն ընդդէմ)

Տօն Սէզար Պատմեն։

(Տօն Սէզար՝ էր մտադրութեանց մէջ ընկերանալ , խոպո-
զելու վէր կ'ուտեու ։)

ՏՕՆ ՍԷԶԱՐ

Ա՛լ հիմա եկան։

(առանձին)

Օ՜հ , շըքեղ սեռէն (1)։

(Մինդրեու պատահին խորին ձերբազատուելու մը կ'ընէ
ետպէս խորը , ինչ կու գայ ընդառմացեալ քեզին ուզելը։)

Սատան կամ Սալամի
Մատ ունի այս տեղ։ Գըրաւ կը դընեմ
Որ հօբրորդիս ալ անշուշտ՝ ուր է նէ ,
Տ'եալի 'յերեւան։ Տածուհի մ'ատ այժմ։

(Քովէն)

Ես եմ տօն Սէզար։ — Խիր է Ատուծոյ։ —

(առանձին)

Ընդհանուր կանոն՝ պատաւը թարմին
Ախտաբերն է։

ՏԱԾՈՒՀԻՆ (երբեք խոչընդելով ձերբազատուելուն)

Կ'ուզեմ քեզ՝ ախոյր ,

---

(1) beau sexe.

Ա՛յսօր ծոմի օր , ՝յանուն Բ՛ենորդւոյն
Որմէ վեր չը կայ ոչինչ պերապոյն ։

ՏՕՆ ՍԷԶԱՐ (ա֊ահնչէն)

Սիրապաշտ (1) *վերջի՛ կրօնապաշտ* (2) *բակիպը ։*

(Քա֊ջնչ)

Ամէն եւ ամէն . — Ասուծոյ բարին ։

ՏԱ՛ԾՈՒՀԻՆ

Ասուած խնդութեան մէջ պահէ ձեզ միշտ ։

(Գաղղիացածաձոյկ կերպով մը)

Տուի՛ք մէկու մը որ իս ձեզ խաւրեց
Վասն այս գիշերւան ծածուկ ժամադեղ մը (3) *։*

ՏՕՆ ՍԷԶԱՐ

Բայց խիստ կարօղ եմ ։

ՏԱ՛ԾՈՒՀԻՆ

(Ծալած պոմադակ մը կը հանէ գոգնոցէն ու կը ցուցնէ անոր
քայց չը ընդլայն որ ատանա՛ կը չերեւէր ։)

Ուրեմըն դո՛ւք էք՝
Գեղեցի՛կըդ իմ գաղտնի՛ք գեղապաշտ ,
Սա գըրին տէրը , եւ այս գիշերւան
Համար յատկապէս գըրեցի՛ք մէկու մ՛
Որ ձեզ կը սիրէ եւ ՝զոր դուք գիտէք ։

ՏՕՆ ՍԷԶԱՐ

Ե՛ս ըլլա՛ւ եմ ։

---

(1) galant. (2) dévot. (3) rendez-vous.

ՏԱԾՈՒՀԻՆ

Լաւ. բայց սիրուհին
Բուրգմօրուք(1) *էրկան մը ձեռք ըլլալով,*
Հարկաւ ըսախպեալ է ակնածութեանց,
Եւ հոս ղրկվեցայ ի տեղեկութիւն։
Ջինքն ես չեմ ճանչեր, բայց պուք կը ճանչէք։
Նաժիշտն ինձ ըսաւ։ Եւ ասի բաւ է։
Անուն չը տալով։

ՏՕՆ ՍԷԶԱՐ

Բայց իմ անուննէս։

ՏԱԾՈՒՀԻՆ

Ա՛ յայտնի բան է։ Տիկին մը կրնայ
Սրտին սիրածէն ժամեզ մ՚ընդունիլ,
Բայց կը վախցըվի՝ չ՚ըլլայ որոպայթ.
Երբէք պէտ չ՚ունին խիստ ըզգուշութիւնք։
Կարճ խօսք՝ ես հրեշտակ կու գամ հոս առնուլ
Նոյն իսկ ձեր բերնէն հաստատութիւնը։

ՏՕՆ ՍԷԶԱՐ

Պառաւ վայրաւնուն, ոհ, ինչ մացառներ
Սիրապրի մը չուրջ։ Այո, ես եմ, ես՝
Ըսեմ կոր քեզի։

ՏԱԾՈՒՀԻՆ (Սէզարին վրայ կը դնէ ձալած պոմադէը՝ ըսելէ
ետք Սէզար կը ջնջէ հեգոտէյտօպիէամը։)

Երբոր առանկ է՝
Իրաւ պուք էք նէ, գըրեցէք՝ եկիր

---

(1) barbon.

Սա թըղթին կռնակ · բայց ո՛չ ձեր ձեռքով,
Ձի բան մը չ'ըլլայ առիթ վրտանդի։

ՏՕՆ ՍԻՋԱՐ

Վա՛յ · իակ արդարեւ · գուցէ իմ ձեռքո՛վ։

(առանձին)

Հըրեշտակութիւն լա՛ւ ի գլուխ հանված։

(Ձեռքը կ'երկընցնէ նամակն առնելու համար · բայց քաշ-
վելէն ետքը վերջապէս կ'ուժգնանայ , և պաշտօնեան չը կո-
ղաւ ու պոռնի ։)

ՏԱՃՈՒՀԻՆ

Մի բանաք ։ Ծալքէն իակ ճանչցուա՛ծ է ։

ՏՕՆ ՍԻՋԱՐ

Տարակոյս չը կայ ։

(առանձին)

Մարէմի կող ու

Ես ալ կարդալու ։ Դերեզմնից խաղանք ։

(կը ցնցի վանկէկը ։ Սե՛ր մը նեղս կո՛ւ գայ ։)

Գիր գըրել գիտես ։

(Հապշտակն աջակողմեան նշան կ'ընէ գլխով ։ Տօն Սէզար
կը ժպտի ։)

(առանձին)

Ընտանիք խօսիլ ։

(քա՛յէ)

Հմայր ես դու խալխիկ ։

(Հապշտակը նորէն աջակողմեան նշան կ'ընէ ։ Նորէն ըն-
դունի աջակողմեան ։)

(առանձին)

Խիստ աղէկ, նայինք
Վերջն ուր տի երթայ. հիմայ ալ մուռճերը։

(Առանձին կ'ըսէ՝ ցուցնելով անոր ըշնամակը՝ ետև աեպա-
նին վրայ դրած քառնէր կէտերէ ի պաձուհին։)

— Գրէ՛ հուսաս՝ եկիր։

(Առանձը կը գրէ։ Տօն Սէզար կ'ակնոթիկէ պաձուհոյն ու
առնաս նամակը, և մռանձին՝ ու պուրս կելլէ։ Առանձը
կ'ելլէ պուրս։)

(առանձին)

Հնազանդ մէկն է։

ՏԱ.ԾՈՒՀԻՆ

(Տոմսակը նորէն էր գոգնոցը դնելով ու պօն Սէզարայ
մօտենալով։)

Դուք այս իրիկուն՝ զինքը տի տեսնէք։
Աղուոր[ի]կ է մի։

ՏՕՆ ՍԷԶԱՐ

Սխրալի հրեշտակ։

ՏԱ.ԾՈՒՀԻՆ

Նաժըշտին՝ մղէ, ըսելիք չը կայ։
Ֆարոզին մէջտեղ իս քաշեց մէկ դի։
Հանց գեղեցիկ որ չեմ կրնար պատմել՝
Սատանի աչքով հրեշտակի պատկեր.
Սիրային գործոց եւ կարծես վարպետ։

ՏՕՆ ՍԷԶԱՐ (առանձին)

Ես նաժըշտին էլ կը չատանայի
Նաեւ չատ աղէկ։

ՏԱԾՈՒՀԻՆ

Քանզի գեղը միշտ
Վախեն է տըգեղին , հարճէն (1) կը դաւեռնք
Մեռնք սուլթանուհին , տէրը ծառայէն ։
Ոչսոխ ձերն անշուշտ գեղեցիկ է յոյժ ։

ՏՕՆ ՍԻՋԱՐ

Պարծիմ պանծանօք ։

ՏԱԾՈՒՀԻՆ

(Ա. ՅՔԵԼ ԵՐԲԱԼԵ- հատոր ձնբաձալա-ՔԻՆԱՆ Տ'ԸՆԵԼՈՎ ։)

Ձեռվելիդ եմ պատճեր ։

ՏՕՆ ՍԻՋԱՐ (պալով առոր ափիկ մը (2) ոսկի)

Թաթիկդ եմ օծեր ։ Ա՛ռ քեզի , պատառ ։

ՏԱԾՈՒՀԻՆ (գրպանը նետելով)

Ջուարթ են պատանիք մեր այս օրերըս ։

ՏՕՆ ՍԻՋԱՐ (՚ականջ ճոճելով)

Ա. երթամ քարով ։

ՏԱԾՈՒՀԻՆ (ձնբաձալա-ՔԵԱՆԸ)

Թէ պէտք ըլլայ նէ . . .
Օլիվա խաթուն կ'ըսեն իմ անուանս ։
Վանք Սուրբ-Իզիսբօ ։ —

(Դուրս կ'ելլէ . յետոյ պուտը նորէն կը քաշվի ու գլուխ-
ը կ'երեւայ պոռնէն ։)

Իա միշտ կը գանէք՝

---

(1) Հալայըէ ։ (2) une poignée.

Եկեղեցիէն ներս մանեմնուդ պէս՝
Ա՛լ կողմը երթորդ սիւնին տակ նստած ։

(Տօն Սէզար Եռին կը պառնայ անհամբերութենէմբ ։ Դուռը կը բացվի · յետոյ նորէն կը բացվի ու պառաւը նորէն կ՚երեւայ ։)

Դուք այս իրիկուն՝ զինքը տի տեսնէք ·
Ձեր աղօթից մէջ իս ալ միտ բերէք ։

ՏՕՆ ՍԷԶԱՐ (՝ղէնի բարեհաճութենէմբ վերնահեղով)

Ա՜հ , տակաւին հոս ։

(Տաքուհին կ՚աներեւի · դուռը կը բացվի ։)

ՏՕՆ ՍԷԶԱՐ (մինակ)

Ճշմարիտ Աստուած
Որ միտքըս դըրի ալ չը զարմանալ
Ինաւ ամենեւին ։ Լուսինն եմ քնակած ։
Աւասիկ եւ ինձ բախտ գեղաչքնորհ (1).
Սիրոս ալ տի բերկրի որպէս իմ որկոր ։

(Երաժշտով)

Ա՛յս ամենն աղէկ ։ — Ըզգոյշ վախճանէն ։

(Խորի դուռը նորէն կը բացվի ։ Կ՚երեւայ մօն Լուսինան ընեւին պակ երկու երկայն սառներով ։)

---

(1) bonne fortune galante.

Ե· ՏԵՍԻԼ

ՏՕՆ ՍԷԶԱՐ, ՏՕՆ ԿՈՒՌԻՏԱՆ·

ՏՕՆ ԿՈՒՌԻՏԱՆ (Խոպրին խօրէն)

Տօն Սէզար Պազմն։

ՏՕՆ ՍԷԶԱՐ

(Երկին կը դառնայ ու կը պեռնէ ըղձօտ կառքեան
Ե երկու առաքեբէը։)

Գնալ է, վերջապէս։
Արկածը լաւ էր, կ'ըլլայ լաւագոյն։
Լա՜ւ ընթերիք, ոսկի, ժամանակ մը սիրոյ, —
Եւ մխնամարտ մը։ Կ'ըլլամ ես դարձեալ
Բուն ես իսկ Սէզար։

(Խել մը փոյն ընդ փոյն քաղքառաջնեբով զառաբն կը մոռ-
չի ոտն կառքեանայ, ու խռովարկու ալ մը կը պնդէ ա-
նոր վրայ ու խնամ խնամ տայլառաջով յառաջ կոխ գայ
Նապեր առջեւը։)

Ա՜յո՛, այս առտու է,
Սեպուհ սիրելի, հրամեցէք մըտէք։

(Ամբոխ մը կը մոտաւանի ոտն կառքեանայ ու չը նպիք։)

Հաճեցէք նստիլ։ — Ա՜զատ ձեր ատն պէս։
Բերկրեանք ձեր այցէն։ — Ա՜զէ, խոսակցինք
Պահ մ'ատկէ անկէ։ Ի՞նչ լուր ի Մատրիտ։
Ա՜հ, ինչ սիրուն տեղ։ Բնաւ ի՛ց իսկ անդուր
Եմ ես մընացած։ Մաթալօպոս միշտ

Եւ միշտ Լինտաուէր՝ կարծեմ կը պրաւեն
Ջուշերն ամենուն ։ Ես ինծի համար
Յաւէտ կը վախնամ՝ իբրեւ վրտանգ մեծ ,
Սրտի դողուհին քան ըզ դողն ոսկւոյ ։
Ո՛հ , կանայք , կանայք · այդ ճիճի սերունդն
Իս պըրաւած է , եւ իմ այդ մասին
Գլուխըս բախուկ(1) է ։ Խօսեցէ՛ք , տ՛էր ,
Խելքս առէ՛ք բերէ՛ք չիտակ ճամբու մէջ ։
Չ'եմ եւս կենդանի · իմ քով մարդկութիւն
Շուշտրդ(2) չ'է ճնացած · էակ մի՛ն եմ անբան ,
Դի մ'որ կ'արթըննայ , եզ մը , Խաչիկօ մ'(3)
Հընոյն–Բաստիլիոյ ։ Փետուրըս դողյան ,
Զեռնոցըս կորաւ ։ Ալլանդալապոյն
Աչխարհներէն եմ դարձեր նոր կու գամ ։

ՏՕՆ ԿՈՒՈՒԻՏԱՆ

Նո՛ր կու գաք դուք հոս՝ իմ տ՛էր սիրելի ·
Ե՛ւս առաւել նոր կու գամ ես ձենէ ։

ՏՕՆ ՍԻՋԱՐ (պռաուիսթէս)

Ո՛ր չըքնաղ ափանց ։

ՏՕՆ ԿՈՒՈՒԻՏԱՆ

Անտի , հիւսիսէն ։

ՏՕՆ ՍԻՋԱՐ

Ես՝ չատ անդիէն , հարաւէն ։

ՏՕՆ ԿՈՒՈՒԻՏԱՆ

Սատմիկ

Զայրացեալ եմ ես ։

---

(1) félé. (2) Բայց այն բանէ չը ճաշուրդ· – (Խոէր)։ (3) Խիստ հին ջեղէ աչնբաուչան ասյանիսթ։

ՏՕՆ ՍԼՋԱՐ

Անանկ չ՚կ՚ըլլար ես ալ՝
Սաստիկ կատղած եմ ։

ՏՕՆ ԿՈՒՈՒԻՏԱՆ

Հազար երկ հարիւր
Մղոն քայլեցի ։

ՏՕՆ ՍԼՋԱՐ

Ես՝ երկու հազար ։
Տեսի դեղնագոյն, կանաչ խորոպիք,
Կաս-կապոյտ, սեր-սեւ, ամեն գոյն կնկաւիք ։
Տեսի երկընքէ օրհնեալ տեղվըտիք՝
Երջանիկն Ալժէռ, սիրելին Թունիզ,
Ուր՝ Թուրքերն այնքան բարեբարոյ են,
Որ խեղ մը մարդիկ յարդով կչտալիր (1)
Ձանկեալ (2) *կը տեսնին դռներու վրայ ։*

ՏՕՆ ԿՈՒՈՒԻՏԱՆ

Իս խաբեցիկն, տիար ։

ՏՕՆ ՍԼՋԱՐ

Ա՛յլ իս ծախեցիկն ։

ՏՕՆ ԿՈՒՈՒԻՏԱՆ

Իս աքսորեցիկն պըրեթէ ։

ՏՕՆ ՍԼՋԱՐ

Ա՛յլ իս
Կախեցիկն պրեթէ ։

---

(1) empaillé. (2) accroché.

ՏՕՆ ԿՈՒՈՒԻՏԱՆ

Իս վարպետութեամբ
Ներօպուրկ ղբրկեցին՝ տանիլ տուփի մ՚մէջ
Գրված սա չորս բառ՝ « Որքան կարենաք
« Այդ տեղ պահեցէք բերօղ ծեր խենդը » ։

ՏՕՆ ՍԷՋԱՐ (*Թահթահ Ֆոբէլով*)

Է՛յ , չեմ դիմանար ։ Գեղեցիկ գաւեշտ ·
Հեղինաձկն ալ է ։

ՏՕՆ ԿՈՒՈՒԻՏԱՆ

Սակայն չարաչար
Տի ղրկեմ ճիտը Սէզար Պազանայ ։

ՏՕՆ ՍԷՋԱՐ (*Ձանբուռ-ներամբ*)

Ա՜հ ։

ՏՕՆ ԿՈՒՈՒԻՏԱՆ

Յանդգնութեան չափն անցուցնելով
Պահ մ՚առաջ ինծի ըսպասիկ մ՚իր տեղ
Բռներ ղրկեր է , ներսեմ խնդրելու
Համար է եղեր ։ Սեղան չոկող մը ։
Չ՚ուզեցի բնաւին ծառան ես տեսնել ·
Այլ առ իս ՝զանի բանտարկել տուի
Ու սիրտն եկայ ։ Այն Սէզար Պազանն ,
Այն անամօթը , այն լիրբ դրուժանը ,
Նայիմ առ ուր է , ըսպասեմ ։

ՏՕՆ ՍԷՋԱՐ (*Ծիշտ Ձանբուռ-ներամբ*)

Ես եմ ։

ՏՕՆ ԿՈՒՈՒԻՏԱՆ

Դուք · — կատակ մի , տիար ։

ՏՕՆ ԱԼՋԱՐ

Ես եմ ծօն Ալջար ։

ՏՕՆ ԿՈՒՐՏԱՆ

Ի՞նչ . կատաղ դեռևս ։

ՏՕՆ ԱԼՋԱՐ

Այո , դեռևս ։

ՏՕՆ ԿՈՒՐՏԱՆ

Սիրելիս , թողէք այդ դերը մէկդի ·
Եթէ զուարճալի ըլալ կը կարծէք
Գիտցէք՝ եւեւլօք իս կը ձանձրացնէք ։

ՏՕՆ ԱԼՋԱՐ

Եւ դուք ալ իս խիստ կը զբուարճացնէք ։
Նախանձոտի մը տիպար կ'ընծայէք ։
Կ'աշխարհիս սրտանց ըզ ձեզ՝ սիրելիս ,
Չի չարն որ գայ մեզ այլոց յանցանքէն
Զարտպոյն է քան 'զոր գայ մերինէն ։
Լաւ եւս է ըլալ՝ եւ 'զայս ձեզ կ'ըսեմ ,
Աղքատ քան կծծի , կուկուս (1) քան կէտղէ (2) ։
Իակ դուք երկուքն ալ էք միանգամայն ։
Կ'երդնում արեւուս՝ որ այս իրկուն ալ
Ըսպասեմ կոր արդ տիկին ձեր կինը ։

ՏՕՆ ԿՈՒՐՏԱՆ

Իմ կինն ։

---

(1) coucou. Թռչուն ողորմաչայն որոյ էգն իր ձուն ի'երկայ ուրէշ ևաչնոյ բոյնին մէջ ի'ածէ: (2) Խորոշ ահեղագոչ որ ահեղագոչ նախընձոյ ալ է:

ՏՕՆ ՍԷՋԱՐ

Այո՛, ձեր կինը ։

ՏՕՆ ԿՈՒՒԻՏԱՆ

Քաւ լիցի,
Ես կարգըվաճ չ'եմ ։

ՏՕՆ ՍԷՋԱՐ

Զեւեբրնթիդ ինչ են
Հապա եւ այդքան դիւրակրութիւննիդ (1)
Եթէ կարգվաճ չ'էք ։ Քաւորդ մըն է որ
Տիարը ձեւ կ'առնու՝ ճչօղ արոջ մը
Կամ լացօղ վախեր այնքան նմանօղ
Որ պարզմըտութեամբ ես ալ խաբել մ'իրեն
Խրատներ կու տամ վիճակին յարմար ։
Իսկ թէ չ'էք կարգվաճ՝ 'յանուն Վահագնայ,
Ո՞ր վաստով այդքան ծաղրական կ'ըլլաք ։

ՏՕՆ ԿՈՒՒԻՏԱՆ

Գիտէք տիար՝ թէ 'վիս գըծէն կը հանէք ։

ՏՕՆ ՍԷՋԱՐ

Պահ ։

ՏՕՆ ԿՈՒՒԻՏԱՆ

Թէ չափազանց է այդ ըրածնիդ ։

ՏՕՆ ՍԷՋԱՐ

Իրաւ ։

ՏՕՆ ԿՈՒՒԻՏԱՆ

Թէ դուք 'զայդ ինծի տի վճարէք ։

---

(1) susceptibilité.

ՏՕՆ ՍԷԶԱՐ (խեղկատակ կերպով մը կը շինէ պօն կո-
ռէպանայ մուճակները որ անոյշ եղած են ժապաւէնի
ալեաց պակ ըսա նոր մօտայքն :)

Ժապաւէնն երբեմն մարդիկ գլխոյ միայն
Զարդ էին ըրած : Այսօր կը տեսնեմ՝
Պարկեշտ մօտայ մը , կօշկին վրայ դրված :
Գլխարկն ատկընին կ՚անցուցնեն հիմա :
Ընքանչելի գլուա , չքնաղ վերջին ծայր :

ՏՕՆ ԿՈՒՈՒՏԱՆ

Տի կուճնաք հիմա :

ՏՕՆ ՍԷԶԱՐ (անհոգ և անկուշեկիր)

Կը կարծէք :

ՏՕՆ ԿՈՒՈՒՏԱՆ

Անշուշտ

Սէզարը դուք չ՚էք , հոգ չ՚է եւ ատի
Իմ գիտնալիքս է , բայց ձեռնէ սկըսիմ :

ՏՕՆ ՍԷԶԱՐ

Բայց նայեցէք որ լինէ չ՚աւարտէք :

ՏՕՆ ԿՈՒՈՒՏԱՆ (ծափոցներով երկու աոաջքոց ղէկը)

Շուտ , ամբարտաւան :

ՏՕՆ ՍԷԶԱՐ (աոաջքն առնելով)

Իակինթն : Ձեմ վախցներ՝
Երբոր ձեռքս անցնի՝ լաւ մէնամարտ մը :

ՏՕՆ ԿՈՒՈՒՏԱՆ

Ո՞ւր :

ՏՕՆ ՍԷԶԱՐ

Պատմեն եառեւ : Ուահն ամայի է :

ՏՕՆ ԿՈՒՈՒԻՏԱՆ

(Իր սուաեբէն ձայբը փոքչելով գեպռնէն վեռ :)

Ինչ Սէզար , ան՝ ալ յետոյ կ՚ըսպանեմ :

ՏՕՆ ՍԷԶԱՐ

Իրաւ որ :

ՏՕՆ ԿՈՒՈՒԻՏԱՆ

Անշուշտ :

ՏՕՆ ՍԷԶԱՐ (*Դառե՛ւ իր սուաեբէը կոպացնելով*)

Փէհ , մեռնէ մէկը
Մեռած ըլլալով՝ ճակատանիդ ես ձեր
Կը թիւեմ թէ որ յետոյ ըսպանէք
Դուք ըզ ոճն Սէզար :

ՏՕՆ ԿՈՒՈՒԻՏԱՆ

Եւմ՚նք ի ճակատ :

(Ու՚ելուէն գուռա երկուռէը մեկէն : Ու լսվի սպիտակ յայդը
ու կը հեռանան : Ա.Ը կողմի պատկեն մեկէն ժառաւակ գուռակ
դ՚ու կը քաշվի ուրիշ կող գայ ներս ոճն Սալտան :)

Զ. ՏԵՍԻԼ

ՏՕՆ ՍԱԼԻՍԹ

(Գլխին սեւ մազի կանաչ հանդերձի մը հագած : Հոգած ու մտատանջ կ'երեւի : Կը նայի ու մտիկ կ'ընէ անհաւատգլուխներուն :)

Չի՛ք լինէ հանդերձանք :

(Կերակրօտ լի սեղանը պետանելով :)

Ա՛ւ լինէ ըսել է :

(Մոխի ընելով Սէլատայ և կատաֆպանայ ոտից յայները :)

Եւ լինէ այդ արուխիւն :

(Մոայոյզ կը շրջի քեօշն ու-ջեբը :)

Կուտիէլ այս աւուրս

Մանկլաւիկը դուրս եկած տեսեր է

Ու 'զայն լուտեր : — Կուռխանայ քով

Կ'երթար մանկլաւիկն : — Ուշ Պլաս չեմ տեսներ :

— Այդ մանկլաւիկը . . . — Սադայէլ , գուշ թէ

Ական մըն է սա ընդդիմախոսեանլ ,

Ա՛զդ հաւատարիմ տուեալ թագուհոյն

Տօն կուռխանայ միջնորդութեամբը :

— Մունճերէն ալ բան իմանային անմարթ :

— Այո՛ , այս սա՛ է : Խելք չ'ըրէ կանխաւ

Այդ կուռխանն ալ :

(Տօն Սէլաբ ներս կու գայ՝ յետէն մէկ ասաելով 'զաբ մանեկնի կը նետէ ալեւոի մը վրայ :)

Է· ՏԵՍԻԼ

ՏՕՆ ՍԱԼԻՍԹ, ՏՕՆ ՍԷԶԱՐ·

ՏՕՆ ՍԷԶԱՐ (դրան շեմին)

Ա՛հ, *կարծիքս եւս·*
Ա՛ստղիկ ուրեմն եւ դուք ծեր սատան ։

ՏՕՆ ՍԱԼԻՍԹ (երկին դառնալով, ժպտալով)

Տօն Սէզար ։

(*Տօն Սէզար ընթերցը կոտրձտէին վրայ երբ քերթելով և ձեռ ժահրահով ։*)

Անշուշտ, ահեղ դարման մը
Կը գործէք դուք հոս · բայց եկեր 'զամեն
Կը խանգարեմ ես այս պահուս՝ չ'ըլ մի ։
Գործին ճիշտ մէջտեղ բոլոր ծանրութեամբս
Եկայ տափկեցայ (1) ։

ՏՕՆ ՍԱԼԻՍԹ (ատանձէն)

Համայն խանգարեալ ։

ՏՕՆ ՍԷԶԱՐ (ձիձաղելով)

Առաքմէ ի վեր ցըխցըխամ (2) *կոր ես*
Արձակ ձեր սարդի ոստայնին միջեւ ։
Ձեր նիւթածնութիւն ուչ մէկը կանգուն
Մնացած ոխ ըլլայ ։ Թաւալիմ կոր մէջն
Ըսա քերման բախտին, եղծելով համայն
Ձեր ըրածները ։ Ո՛հ, ինչ զուարճութիւն ։

---

(1) s'épater. (2) patauger.

ՏՕՆ ՍԱԼԻՍԹ (ատամնյին)

Դըժոխք , ինչ միթէ կրցած է ընել ։

ՏՕՆ ՍԷԶԱՐ (ետ *տան* ՝ վէտ *ատապիկ* ձէձապէլով)

Ոսկեբարձ մարդըդ , — այն գործին համար , —
Վատն այն ՝զոր գիտէք , — եւ ով ՝զոր գիտէք , —

(կը ձէձապէ)

Ձիշտ ատանկ է ։ —

ՏՕՆ ՍԱԼԻՍԹ

Է՞յ ։

ՏՕՆ ՍԷԶԱՐ

Զայն գինուվցուցի ։

ՏՕՆ ՍԱԼԻՍԹ

Էյ քուվի դրանը ։

ՏՕՆ ՍԷԶԱՐ (վէհափառաբէս)

Պարոնեներ ըրի
Զանազան անձանց ։ Ի՞նչ ըսել է , մարդ
Բարեկամներ ալ չ՝ունի հոգալու ։

ՏՕՆ ՍԱԼԻՍԹ

Յանիրաւի է կասկածդ իմ վըրայ . . .
Ես . . .

ՏՕՆ ՍԷԶԱՐ (էդ գըպանդը ձեձել հնչեցնելով)

Նախ իմ գրպանքըս լըցի , անշուշտ ։

(Դարձեալ կ՝ըսկըսի ձէձապել ։)

Գիտէք ա , հապա այն ախկինը . . .

ՏՕՆ ՍԱԼԻՍԹ

Օ՜հ ։

ՏՕՆ ՍԻՋԱՐ (ոլ կը դիպչի անոր անյիսմիթանը)

Ձոր դուք կը ճանչէք, —

(Տօն Սալոմի մարի կ'ըսէ կիներուն անյիսմիթանը ։)

(Տօն Սէլար կը շարժանակէ ձիձաղով ։)

Որ կ'առաքէ լինճ
Ձառադէմ դժնեայ ճառուկ մը բանքեր
Ոյր մօրուք ծաղկեր եւ քիմ բողբոջեր . . .

ՏՕՆ ՍԱԼԻՍԹ

Ի՞նչ բանի համար ։

ՏՕՆ ՍԻՋԱՐ

Հարցնելու համար՝
Յուշիկ ըզգուշիկ՝ թէ Սէզար ինքն է
Իրաւ այս գիշեր 'ղէնի ըսպասողն . . .

ՏՕՆ ՍԱԼԻՍԹ (ժառանգին)

Երկինք ։

(Քաջիր)

Եւ դուս ինչ պատասխան տուիր ։

ՏՕՆ ՍԻՋԱՐ

Այո վարպետըս, ըսի թէ՝ այո
Կ'ըսպասեմ 'ղէնի ։

ՏՕՆ ՍԱԼԻՍԹ (ժառանգին)

Թերեւս յոյս կայ դեռ ։

ՏՕՆ ՍԻՋԱՐ

Վերջապէս՝ այն ձեր մեծ ըսպանդապետ,

Մեծ խրոխտաճեմը՝ որ գաշտին վերայ
Ըսաւ թէ ունի անուն — կուռխտան ,

(Շարժուած պօն Սալաֆեայ :)

Որ այս·առաւօտ չ'էլ ուզեր տեսնել՝
Խելացի մարդը , Սէզարայ կողմէն
Իրեն թուղթ բերօղ մէկ ըսպասիկը ,
Ու եկեր էր հոս լինէ այդ մասին
Հաւուցում խնդրել :

ՏՕՆ ՍԱԼԻՍԹ

Եւ դուն լինչ ըրիր :

ՏՕՆ ՍԷԶԱՐ

Մեռուցի ես այն սազի ձագուկը :

ՏՕՆ ՍԱԼԻՍԹ

Իրաւ :

ՏՕՆ ՍԷԶԱՐ

Խիստ իրաւ : Հունաց՝ պատին տակ ,
Փըչէ կոր հիմա իր յետին շունչը :

ՏՕՆ ՍԱԼԻՍԹ

Գիտես աներկբայ որ մեռած ըլլայ :

ՏՕՆ ՍԷԶԱՐ

Վախնամ :

ՏՕՆ ՍԱԼԻՍԹ (ուռանչէն)

Շունչ կ'առնուս : Պարզեւեց երկինք
Որ չ'էք քան մ'աւերեր , ընդհակառակը :
Սակայն ճամբէնք սա , ազատինք ձեռքէն .
Ա՜հ , լինչ անընդել սատար խառերախ :
Իակ առած ըստակն՝ հոգ չ'էր , քան մը չ'էր :

(Քաջք)

Յեղակարծ է դէպն ։ Ալ ուրիշ անձինք
Չը տեսնէր արդեօք ։

ՏՕՆ ՍԷԶԱՐ

Ո՛չ ։ Բայց ոչ տեսանեմ ։
Տէր չարունակեմ ։ Դէրած եմ միաքըս
Տարփողել անուշնս ընդ բոլոր քաղաք ։
Մեծ պայթակղութիւն ոչ հանեմ ես ալ ։
Նայեցէք դուք ալ ։

ՏՕՆ ՍԱԼԻՍԹ (առանձին)

Ա՜յ չար սատանայ ։

(Ո–ձէն կէրպով և պօն Սէկաբայ ժէյնէոալով ։)

Պահէ ըստակը , բայց ձըգէ տունը ։

ՏՕՆ ՍԷԶԱՐ

Այո՛ , կ'առնուք մի , եւ եռեւէս մարդ
Կը դընէք մի · գիտեմ ձեզ , գիտեմ ։
Յետոյ կ'երթայի՝ ինչ սիրուն նըսիւ ,
Դարձեալ ակնապիշ յառեալ ըզմայլիլ
Ընդ քո կապուտակ , ով ծով Միջերկրեայ ։
Ո՛չ · ոչ ։

ՏՕՆ ՍԱԼԻՍԹ

Հաւատա ինձ ։

ՏՕՆ ՍԷԶԱՐ

Ո՛չ ։ Կ'զգամ նա եւս՝
Որ մէկը կայ այս պալատ–բանտին մէջ
Աւար ընկած ձեր դաւաճանութեան ։
Ջի պալատական ամենայն կընճիռ

Սանդուղ մին է կրկնակ · մէկ կողմէն՝ սըխուր ,
Թեւերը կապված , աչվին պղտորած ,
Գլխակոր կ'ելլի վեր չարչարելին ·
Մխաէն՝ դահիճը : — Արդ՝ դուք էք դահիճն —
— Ո՛վ կրնայ ըլլալ :

ՏՕՆ ՍԱԼԻՍԹ

Օ՜հ :

ՏՕՆ ՍԷԶԱՐ

Ես սանդուղը
Կը քաշեմ ի բաց , համային իսկ անդէն
Կու գայ թաւալ գլոր :

ՏՕՆ ՍԱԼԻՍԹ

Կ'երդնուամ · · ·

ՏՕՆ ՍԷԶԱՐ

Չեմ հաւատար ·
Եւ կ'ուզեմ՝ գոնէ աւրելու համար
Ձեր մեքենայքը , ոտքըս չը քաշել
Ա,յս գործին մէջէն : Գիտեմ՝ հօքրտրդի ,
Կարծղ էք հերիք , ճարպիկ բաւական՝
Երկու կամ երեք պաճուճապատանք (1)
Մէկ թելի վրայ կախելու չափ դուք :
Նահ , անոնց մէկին ալ ես եմ : Չեմ երթամ :

ՏՕՆ ՍԱԼԻՍԹ

Մըտիկ ըրէ · · ·

ՏՕՆ ՍԷԶԱՐ

Ա՜հ , ճարտասանութիւն :

---

(1) pantin.

Եա՛, իս կը ծախէք Ափրիկայ հէնից .
Եա՛, սուտ Սէզարներ կ'արուեստէք (1) մի հոս .
Եա՛, իմ անունըս կ'արատէք մի դուք :

ՏՕՆ ՍԱԼԻՍԹ

Դիպուածՙ :

ՏՕՆ ՍԷԶԱՐ

Դիպուածՙ մի : Տխամարից տարէք
կըլցընել ձեր այդ ոսկէզօծ կլլտը (2) :
Երբէք ես դիպուած չեմ ըսեր աստր :
Բախտին քէն ըրէք՝ հնդս է իմ թէ ձեր
Խանգարին խորհուրդք : Ես վրկել կ'ուզեմ
Զորոնք ի կորուստ կը մատնէք դուք հոս :
Անունըս կ'ելլիմ կը պոռամ հիմա
Սա տանեաց վըրայ :

(*Կ'ելլէ պոպոռհանէն չենարանէն վրայ ու անկէ դուրս*
կը նայի :)

Ձիշտ . ահա կ'անցնին
Պատուհանին տակ բռնաւարք ոսանք :

(*Թեռը յողնըռան (3) ձըչեռէն դուրս կը հանէ և կը պա-*
պանէ պօռալով :)

Հմե :

ՏՕՆ ՍԱԼԻՍԹ (*պակասցեալ՝ ընտրել աստղերը : Ա.ռանձին :*)

Ինքըզինքը թէ որ դիտցընէ ,
Առէն մեր խորհուրդք :

(*Կը մտնէն ընդունարան պատրաստի տ'եպեռէն : Տօն Սա-*
լոմ ատապիկ վարտանօփ խոռվելու կը ըլլի : Տօն Սէզար
պատրաստին կը պինդ յողնական կերպով մը :)

---

(1) fabriquer. (2) pilule. – Էջՙ հլուէլու հա՛ռր ղինվածՙ հլուցչեղէ։ (3) barreaux.

Ը· ՏԵՍԻԼ

ՆՈՅՆԻՍ, ԴԱՏԱՐԱՐ ՄԸ, ԲՈՒՆԱՎԱՐՔ·

ՏՕՆ ՍԼՋԱՐ (*դատարկին*)

Անցուցէք սա ձեր
Առեղտրոց մէջ · · ·

ՏՕՆ ՍԱԼԻՍԹ (*դատարկին ցոյցնելով ընկած Աբգար*)

Թէ աւտարիկ է
երեւելի դիմն այն Մաքեդօնացոց :

ՏՕՆ ՍԼՋԱՐ (*քնդատմտցեալ*)

Ինչպէ՞ս :

ՏՕՆ ՍԱԼԻՍԹ (*առանձին*)

Ամեն բան վաստրկած կ'ըլլամ
Թէ որ վաստրկիս երկուսն ու չորս ժամ :

(*դատարկին*)

Այս մարդ ցերեկով մտնել կը ժպրհի
Տուներ եւ թալլել · բռնեցէք սա գողն :

(*Բռնաւվարք օձիքէն կը քաշեն ընկած Աբգար :*)

ՏՕՆ ՍԼՋԱՐ (*ցայտագին կոպտած առ Տօն Սալոմն*)

Ծառան եմ ես ձեր , յանդիմանդն է այդ առաւ :

ԴԱՏԱՐԱՐՔ

Ո՞վ էր մեզ կանչօղն :

ՏՕՆ ՍԱԼԻՍԹ

Եա ։

ՏՕՆ ՍԷՋԱՐ

Վայ անեքես ։

ԴԱՏԱՐԱՐԸ

Լռութիւն , նայինք · կարծեմ փաստ ունի ։

ՏՕՆ ՍԷՋԱՐ

Բայց նոյն ինքն եմ ես տօն Սէզար Պաղմն ։

ՏՕՆ ՍԱԼԻՍԹ

Ի՞նչ , տօն Սէզար մի ։ — Լօդիկը մէյ մը
Հաճեցէք նայիլ · ՍԱԼԻՍԹ մեծ գըրով
Գրված տի դանէք օճախքին նեռևեւ ։
Այդ լօդիկն ինչ նոր հման գողցաւ . . . —

(Բռնավարժ խոպիկ կը փաշէն կ'ատանուան լօդիկը և պա-
պարտըը 'ղանի կը փնէ ։)

ԴԱՏԱՐԱՐԸ

Ճիշտ է ։

ՏՕՆ ՍԱԼԻՍԹ

Կոնըկին այդ պարեզօտն ալ . . .

ՏՕՆ ՍԷՋԱՐ (ատանէն)

Ընդմիեամ Սալուեթ ։

ՏՕՆ ՍԱԼԻՍԹ (շարունակելով)

Ալեայ կոմսին է ,
Անկէ գողցված է . . . —

(Ցոյցնելով յախ ընկլանին եզբը քանված պճնանքշը [1] ։)

Ահա կնիքը ։

ՏՕՆ ՍԼՋԱՐ (ատաձին)

Կախարդեամբ իսկ է ։

ԴԱՏԱՐԱՐԸ (պճնանքշը ննելով)

Այո, ասասիկ

Երկ ոսկի բերդերն · · ·

ՏՕՆ ՍԱԼԻՍԹ

Եւ երկու կաթսայք ·

Ինուիքէզ, կռզման ։

(Տօն Սէլար յոտվելնէ գրպանէն կը յգէ փանէ մը կրճնակ ոսկի ։ Տօն Սոլտն կը ցոյցնէ գասպարբին ինչէս գրպանէը լցուն ըլլալը ։)

Պարկեշտ մարդիկներ
Կը կրճն մի այդքան բաւական վըրանին ։

ԴԱՏԱՐԱՐԸ (գլուխը վեր ընկվելով)

Հըմն ։

ՏՕՆ ՍԼՋԱՐ (ատաձին)

Բռնըվեցայ ։

(Բռնաւալտ կ'որոնէն գրպանէը և ըսպասինեբը կ'ատռնաւան ։)

ԲՈՆԱՎԱՐ ՄԸ (որոնելով ատ հանելով)

Ահա եւ թըղթեանք ։

---

(1) écusson.

ՏՕՆ ՍԷԶԱՐ (ոտանկին)

Անհոգ ալ մի ։ Վախ , այն հէք սիրագիրք
Մազապուր զերծեալ ցարդ իմ վըշտաց միջ ։

ԴԱՏԱՒՈՐԸ (անբաւականութիւնը ցոյնելով)

Նամակնե՞ր · · · ասա՛ ինչ , — զանազան գըրո՞վ · · ·

ՏՕՆ ՍԱԼԻՍԹ (խորաքննութիւնը դէպ ի տալով անոր)

Բոլորն ալ ուղղեալ առ կոմսըն Ալպայ ։

ԴԱՏԱՒՈՐԸ

Այո՛ , ճշմարիտ ։

ՏՕՆ ՍԷԶԱՐ

Բայց · · ·

ԲՈՆԱՎԱՒՐԻ (անոր յետվերնելը կսպասելով)

Բռնըվերցուր ,

Ի՞նչ բարի պատահ ։

ԲՈՆԱՎԱՒՐ ՄԸ (ներս մտնելով՝ պոպոլարքին ։)

Մարդ մը կայ հոս տեղ
Դեռ նոր ըսպանված ։

ԴԱՐԱՒՈՐԸ

Ո՞վ է ըսպաներ ։

ՏՕՆ ՍԱԼԻՍԹ (յուսահատելով ըլլալ Սէզար)

Ահա ըսպանօղն ։

ՏՕՆ ՍԷԶԱՐ (ոտանկին)

Այդ մէկուսարան ալ ,
Ինչ յախուռնն գործ ։

ՏՕՆ ՍԱԼԻՍԹ

· Սուր մ՛ունէր ձեռքը
Նեղս մըտած առեն , եւ ահաւանիկ :

ԴԱՏԱՒՈՐԸ (աստիճանելով)

Արիւն : — Հերիք է :

(ատ պահ Սեղոտ)

Օ՜ն , ընկերը նայիմ
Սա մարդոց առջեւ :

ՏՕՆ ՍԱԼԻՍԹ

(Ա՛ս պահ Սեղոտ ՝ալոր քոռնավարժ քոռնէր կը պանին :)

Է՛յ Մաքալօպոս ,
Գիշեր բարի քեզ :

ՏՕՆ ՍԷՋԱՐ

(Քայլ տ՛ատանելով դէպ ի Սալոմի ու անոր երեսին
խիստ ու խոշոր նայուածով մը :)

Թո՛ւ , գարշելի՛ քեզ :

Ե. ՀԱՆԴԷՍ

—

ՎԱԳՐ ԵՒ ԱՌԻՒԾ

Նոյն ալեհեակ : Գիշեր է : Կառքիեղ մը կը վաճէ
ալեվանին վրայ :

Վարագոյրը քաշուելու՝ ուշ պէտս ջինակ է : Տեսակ մ'էր-
կայն ալ պատրաստեան կը ձգձգէ 'գիւր հագուստը :

Ա. ՏԵՍԻԼ

ՈՒՅ ՊԼԱՍ (ջինակ)

Աարեցաւ երազ : Տեսիլք ցընդուեցան :
Վերջ տուին անդոհք : Օրն ի բուն թափառ
Ոահից մէջ աստ անդ չերջեցայ 'աս դիպաց :
Յոյս մըտաւ սիրտըս : Հանդարտ եմ հիմա :
Գիշերվան պահուն բարուք կը խորհվի :
Չ'ըլլար չընկով գլուխն այնքան լի :
Այնքան ահարկու չեմ տեսներ ըսաուեր
Ես սա սեւաթոյր պատերուն վրեն .
Կահերն են չարված , բանվիք դրանց վրայ .
Մուներն հոն վերը կը ննջեն հանդիստ :
Հանդիստն արդարեւ կը տիրէ տան մէջ :

Ո՛հ , չը կայ իրաւ պատճառ խռովելու ։
Ամեն բան կարգին լաւ անօրինված է ։
Յոյժ հաւատարիմ է իմ մանկլաւիկ ·
Եւ ոճն կուռիտան՝ ապահով նեցուկ ,
Երբ խնդիրն էնար կը վերաբերի ։
Անանկ չ՚է , Ա՛ստուած , Աստուած իմ չ՚է մի
Թէ կրնամ օրհնել ըզ քեզ յաւիտեան ,
Թէ թողիր 'զիս ազգ էնար ժամանիլ ,
Թէ ինձ օգնեցիր՝ դու Աստուած բարի ,
Դու Աստուած արդար , պահել պահպանիլ
Զայն հրեշտակ անմեղ եւ 'ղդաւն ի դերեւ
Հանել Սալոմէայ · Թէ ալ չ՚ունէի էն՝
Ոչ երկիւղ ուսուէք՝ բնաբէ եւ ոչ վիշտ ·
Թէ զերծ է էնի իսպառ վըտանգէ ,
— Եւ Թէ կրնամ արդ ես մեռ ճաշակել ։

(Ծոցէն պզտիկ սրուակ մը կը հանէ ու սեղանին վրայ կը դնէ։)

Այո , ալ մեռիր հիմա՝ վճարդ դու
Եւ գլուխդ 'յանդունդ ։ Մեռիր դու որպէս
Կը մեռնին երբոր ոճիր մը քաւեն ։
Մեռիր այս տան մէջ՝ անարդ , մթու միջոկ
Եւ Թշուառական ։

(Իր աչք պատմառծանին առջեւը կը քանայ որոյ պահէն
հ'երեւայ այն ապահանդերջը 'ղոր կը կրէր առաջին
հանդէսին մէջ ։)

— Մեռիր հուսկ ապա
Ըսպասհանդերձիդ՝ պատանքիդ տակէն
Եւ մարմնոյդ կրպած ։ — Աստուած , եթէ այն
Դէպը պայ մեռած տեսնէ 'զիւր ըսպանդ ,

(Կոհ մը կը հրէ պատնիշելու[1] կերպով ըլլաձաուակ պատրաստել:)

Գէթ չը մանր թող առ ահռե[2] դառնէն:

(Դարձեալ կու գայ դէպ ի ձեղն:)

— Օ՛հ, մանկաւարիկը գըտած է անշուշտ
Ըզ ոսկ կուտիտան. դեռ առաւօտեան
Ուր չը կար ժամը:

(Աչքը պատուհէն կը պոկէ:)

— Իսկ իմ դատակնիք
Վճռած կտրած եմ, ու իմ տանջանքըս
Կը պատրաստեմ արդ. եւ ես իմ ձեռքովս
Իմ գլխիս վըրայ տէր սահարկեմ[3] արդ
Գերեզմանին ծանր այն կափարիչը:
Ինձ ուրախութիւն է գէթ մըտածելս՝
Թէ ոչ ոք հիմա կրնայ բան մ՛ընել:
Ընկճուած է անգարձ:

(Ականէն վըայ նայելով:)

Այլ իս կը սիրէր: —
Ինձի թող Աստուած ըլլայ օգնական.
Սիրտըս թուլնայ կոր:

(Կու լայ:)

Ա՜խ, ըզ մեզ հանդիսատ
Թողեր էին:

(Գլուխը յետ վերնոցն դէպ կը պահէ ու հեծկլտալուն օժ կու լայ:)

Ադրարիչ Աստուած:

(Գլուխը վեր կ՛առնու, և մոլորած պէս պատուհէն նայելով:)

---

(1) barricader. (2) horribie. (3) faire choir.

Սայ՛ ինձի ծախօղ մարդն ինձ կը հարցնէր՝
Ամառն քանի՛ն ենք ։ Չը գիտեմ ։ Ցաւ կայ
Գլխիս մէջ ։ Չար են մարդիկ ։ Կը մեռնիս ,
Սիրտ մը չը չարժիր ։ Դառն է ցաւ սրտիս . —
Էն՛ իս կը սիրէր ։ — Նայէ որ չ՛էր մարթ
Մէյ մ՛ալ ձեռք բերել անցեալէն բան մը ։ —
Ալ չը՛ սի տեսնեմ ես ՛գինքը մէյ մ՛ալ ։
Իր ձեռքն որ ձեռքիս մէջը սեղմեցի ,
Իր այն բերանն որ իմ ճակտիս դըպաւ . . .
— Հրեշտակ պաշտեցեմ , հէք իմ հրեշտակիկ , —
Ես պէտք է մեռնիմ , մեռնիմ յուսահատ ։
Իւր պատմուճանը որոյ չնորհաց բոյն
Էին ամեն ծալք , իւր ոտն որ հողիս
Կը հանէ ի թուռնա երբոր գայ անցնի ,
Իւր մէջքը ՛յորում կը հարբենայինն
Աչերս իմ չուար , իւր ժըպիտ , իւր ձայն . . .
Ալ չը՛ տի տեսնեմ երբեք մէյ մ՛ալ .
Ալ չը՛ տի լսեմ բարբառը մէյ մ՛ալ ։
— Կարելի են մի ատոնք վերջապէս ։
Երբէք ։

(Անյիս-ըներսէ կ՛երթեցինք յետոյ ուրիշ սրահներ, որոնց մէջ կային ուրիշ գործեր ։ Ամէնքն ալ կ՛երեւայ ճերմակներէ հագած՝ ըներսէն կիներ [1] ու որոյ կիներուն [2] սահէրուան վրայ նետված քսայ կը ըներ ՛ջաղ գոտիով երեսը ։ Չորսը խոշոր լապտեր մը ՛ջաղ կը տանէ գերդիմը ու շարժով կը դիմէ դէպ ի ուր Պէտս ։)

(1) mante. (2) capuchon.

Բ. ՏԵՍԻԼ

ՈՒՅ ՊԼԱՍ, ԹԱԳՈՒՀԻՆ.

ԹԱԳՈՒՀԻՆ (*Նէրսա մպանէլսով*)

Տօն սէզար։

ՈՒՅ ՊԼԱՍ

(*Ասրսաֆէ շաբձմոմէ էսէյն պատանալով, ու հապճէպ գոյնէլով պապռաճանն ու կը ձաձկէ 'զէւր ապահանդէսէյը։*)

Ասառւած, նոյն լինքն է. —

Ընկաւ 'յորդայիդ։

(*Քաւէյը*)

Տիկին...

ԹԱԳՈՒՀԻՆ

Ի՞նչ է աւտ',

Ա՛ւտ' լինչ ահաբեկ գոչւում է, Սէզար...

ՈՒՅ ՊԼԱՍ

Ո՞վ ձեզ հոս կանչեց։

ԹԱԳՈՒՀԻՆ

Գոռ։

ՈՒՅ ՊԼԱՍ

Ե՛ս. — Քրոջ, ինչպէս։

ԹԱԳՈՒՀԻՆ

Չեմէ լսաւցայ...

ՈՒՅ ՊԼԱՍ (*Հեռ է հեռ*)

Շուտ լսէք նայիմ։

ԹԱԳՈՒՀԻՆ

Նամակ մը :

ՈՒՅ ՊԼԱՍ

Ինձ :

ԹԱԳՈՒՀԻՆ

Չեր ձեռքի գըրով :

ՈՒՅ ՊԼԱՍ

Հիմա գըլուխըս պատին կը վիշտեմ :
Երբէք չ'եմ գըրած առանց բան , անշուշտ :

ԹԱԳՈՒՀԻՆ

(Ծոցէն հանելով ներքին մը 'ըր կու պայ անոր :)

կարդացէք ուրեմն :

(Ու՛յ Պլաս կ'առնու ընդունելով ու պէտք է
կանչելը ձօնելով կը կարծէ :)

ՈՒՅ ՊԼԱՍ (կարդալով)

« Ահեղ վըտանգ մը
« կ'ըսպառնայ գլխուս : Թագուհիս միայն
« կրնայ 'զիս փրկել . . .

(Թղթած կը նայի նամակին վրայ երբ ալ կարնալով ալէն
ուրիշ պառնել :)

ԹԱԳՈՒՀԻՆ (Ձայն շարունակելով ու մատովը ցուցնե-
լով պոյն ու կը կարդայ :)

« Գալ 'զիս պառնելու
« Այս իրիկուն 'յիմ տուն , թէ ոչ՝ կորած եմ » :

ՈՒՅ ՊԼԱՍ (մատած ու կերկնէ ձայնով մը)

Ո՜հ , ինչ մառնութիւն . այդ ձեռագիրը :

ԹԱԳՈՒՀԻՆ (խոբտալը շարունակելով)

« Ծառուղեաց վարի դռնէն կը մտնէք
« Գիշերն եւ ըզ ձեզ մարդ չը ճանչնալով :
« Անձնուէր մէկը ձեզ դուռ կը բանայ » :

ՈՒՅ ՊԼԱՍ (առանձին)

Ելեր էր մաքէս իմ այդ ձեռագիրը :

(թաքստոցին՝ ահեղ յայնոց մը :)

Գընացէք աստի :

ԹԱԳՈՒՀԻՆ

Կ'երթամ, ծօն Սէզար :
Ի՞նչ չար էք եղեր · ես ինչ ըրի որ :

ՈՒՅ ՊԼԱՍ

Երկինք · ինչ ըրիք — կորնսաս դիմեցիք :

ԹԱԳՈՒՀԻՆ

Ի՞նչպէս :

ՈՒՅ ՊԼԱՍ

Չեմ կրնամ բացատրել · վախէք :

ԹԱԳՈՒՀԻՆ

Ա՛ր ըզգուշութիւն՝ տածուհի մ'նաեւ
Հոգացի ղըրկել ձեզի այս առտօտ · · ·

ՈՒՅ ՊԼԱՍ

Բայց կ'ըզգամ՝ Աստուած , որ ամեն բոպէ՝
Արիւնած սրտէ դուրս վազածի պէս ,
Կը հոսէ ձեր կեանք վէտ վէտ ու կ'երթայ :
Հեռացէք սրկէ :

ԹԱԳՈՒՀԻՆ (յանկարծ նոր քան մը դիպչեն եկածի պէս)

Սիրոյս երազած
Անձնըւիրումն ինձ կ'ազդէ՝ թէ հմուտ կայ
Զեզի պահ չարժամ, եւ թէ հեռակայ
Պահել իս կ'ուզէք ձեր վրտանդներէն։ —
Ուսաի կը կենամ. եկայ, չեմ երթամ։

ՌԻՑ ՊԼԱՍ

Ա՜հ, ինչ օրհնակ մըտածուա՜ Ա՜սուած,
Կենալ այս ժամուս եւ այսպիսի տեղ։

ԹԱԳՈՒՀԻՆ

Ձեր ձեռագիրն է նամակը։ Ուսաի . . .

ՌԻՑ ՊԼԱՍ

(ընթերցո էրկնո վերցնելով յոտահոպոպելեամբ)

Բարերար Ասուած։

ԹԱԳՈՒՀԻՆ

Իս հեռացնել է
Ձեր միտքը՝ պիտի։

ՌԻՑ ՊԼԱՍ (անոր ձեռքը բռնելով)

Համակրցիք մէյ մը։

ԹԱԳՈՒՀԻՆ

Արդ կը դուշակեմ. առաջին պահուն
Գրեցիք մէյ մ'ինձի, իսկ այնուհետեւ . . .

ՌԻՑ ՊԼԱՍ

Զը գրեցի կ'ըսեմ։ Դէշ եմ ես։ Փախիր։
Այլ դու ինքիրենդ՝ ողորմ մանկուհի,

Ֆեզ ծուղակին մէջ բռնեա կար բռնի ։
Բայց եւ իրաւ է՝ զըժոխք ամենուսաո
Ֆեզ կը պաշարէ ։ Ֆեզ համոզելու
Բան մը չը կրնամ–ու գանել ուրեմն ։
Ի՛ս մըտիկ ըրէ , հասկըցիր մէյ մը՝
Ես քեզ կը սիրեմ , եւ ուրքան՝ գիտես ։
Միտքըդ զերծելու համար այդ բանէն
Զոր կ՝երեւակէ՝ սիրտըս կ՝ուզէի
Խըլեր սա կուրծքէս ու առջիդ դընել ։
Ո՛հ , քեզ կը սիրեմ ։ Գընա ։

ԹԱԳՈՒՀԻՆ

Տօն Սէզար · · ·

ՈՒՅ ՊԼԱՍ

Ո՛հ , գընա կ՝ըսեմ ։ — Սակայն միտս եկաւ ,
Ֆեզի դուռ քացօղ մը չ՝եղաւ ։

ԹԱԳՈՒՀԻՆ

Եղաւ ։

ՈՒՅ ՊԼԱՍ

Սադայէլ · ով էր ։

ԹԱԳՈՒՀԻՆ

Դիմակով մէկը՝
Պատին տակ պահված ։

ՈՒՅ ՊԼԱՍ

Դիմակով էր ան ·
Ի՞նչ ըսաւ այդ մարդ · քարձրահասակ էր ·
Այդ մարդը՝ ով է ։ Բայց խօսէ նայիմ ,
Կ՝ըսպասեմ ։

(Աբտաղքեսը և դիմակատուը մարդ մը խօսքի պատճէն
կ'էրբեսայ :)

ԴԻՄԱԿԱՒՈՐ ՄԱՐԴԸ

Ե՛ս եմ :

(Դիմակը վար կ'առնուա : Տօն Սալուոմն է : Թագուհին և
Ուշ Պլաս՝ ան ու պուդէ մը կը ճանչնան ՚ղանէ :)

Գ· ՏԵՍԻԼ

ՆՈՅՆՊ, ՏՕՆ ՍԱԼԻՍԹ

ՈՒՇ ՊԼԱՍ

Ա՛հ, — վախէք, տիկին :

ՏՕՆ ՍԱԼԻՍԹ

Ալ չիք ժամանակ : Նէօպուրկայ տիկինն
Ա՛լ չ՚է յայտնուէ թագուհի Սպանիոյ :

ԹԱԳՈՒՀԻՆ (արհաւրօք և սպոնէլով)

Տօն Սալո՛մի :

ՏՕՆ ՍԱԼԻՍԹ (ցոյցնելով ԸՂՈՒՇ ՊԼԱՍ)

Ընդ միշտ ընկերուհին էք
Ալ դուք այս մարդոյն :

ԹԱԳՈՒՀԻՆ

Ատուածմ մեծ, իրաւ՝
Որոգայթ մըն է : Եւ տօն Սէզար . . .

ՈՒՅ ՊԼԱՍ (յոտատիպ)

Ա՜հ ,

Ի՜նչ ըրիք , տիկին , քիւր եղուկ ։

ՏՕՆ ՍԱԼԻՍԹ (յամբոխայլ ձբյնեալով ընգդուհւոյն)

Ձեռքս է ։ —

Բայց հեզ ու խօսիմ եւ ոչ անհաճոյ
Վեհափառութեանդ , զի չ՚ունիմ զայրոյթ ։
Ձեզ կը պատեմ հոս՝ — մէտ դըրէք խօսքիս ,
Շշընկոց չ՚ընենք , — տօն Սէզարայ հետ
Մինակ , կէս գիշեր , իր սենեկին մէջ ։
Այս եղելութիւն՝ — դէխոյէ մ՚համար , —
Թէ հրատարակվի , — մինակ կը բաւէ
Խըզել ի Հըռոմ կապն ամուսնական ։
Վեհաշնորհ Պապին չուտով կ՚իմացվի ,
Բայց զիջողութեամբ մարթ է խափանել
Ձիրօդութիւնը , կրնայ ամեն բան
Ի ծածուկ մընալ ։

(Գըպանէն գալարած մագաղմն ալ կը հանէ , կը քանայ
ու ընգդուհւոյն կը ներկայացնէ ։)

Ըատրապրեցէք
Սա նամակն ուղղեալ առ տէր մեր արքայ ։
Մեծ կապարճակրին ձեռամբ տալ կու տամ
Մեծ նօտարին ձեռք ։ Յետոյ՝ — կառք մը կայ՝
Ուր դրի չատ ոսկի ,

(Դուրսը ցոցնելով մագով)

Հունտ պատրաստի ։ —

Մեկնեցէք գնացէք իսկոյն երկուքդ ալ ։
Ես կ՚օգնեմ ձեզի ։ կրնաք աներկիւղ
Թօլէտայ ճամբով Ալքանթարայէն

Բօթթուկալ անցնիլ ։ Գնացէք ուր ուզէք ,
Անտարբեր է մեզ , մենք այլ կը դոցենք ։ —
Հնազանդեցէք դուք · երդում կ՚ընեմ որ
Ինչ զատ ոչ ոք պիտէ այս պահուս
Զեղչութիւնը ։ Իսկ թէ որ մերժէք ,
Մատիտ վաղն առւօտ բոլորն ալ պիտէ ։
Բորքոքիլ զուր է · ափիս մէջ էք դուք ։

(Յօնկնելով սեղանն այլ վրայ կայ գրչատան մը ։)

Աւասիկ դրբիչ , դրչաման՝ տիկին ։

ԹԱԳՈՒՀԻՆ (ըզգեցանելով՝ ակռաները վրայ ընկնելով)

Իւր ճանկերն մէջն եմ ։

ՏՕՆ ՍԱԼԻՍԹ

Ուրիշ բան ձեռնէ
Չեմ ուզեր միայն ՚զայդ հաւանութիւնն
Որ թագաւորին մատուցանեմ ՚զանի ։

(Յաչեն ուշ պլասայ՝ որ անշարժ սկսան մարկի կ՚ընէ
նէքը շանխահարելու ։)

Դու թոզ բարեկամ ու ձայն մի հաներ ·
Քու երջանկութիւնդ պատրաստեմ կոր ես ։

(Ընտրուհոյն)

Ըսատրազրեցէք ։

ԹԱԳՈՒՀԻՆ (դողալով , ոտանկեն)

Ի՞նչ ընեմ ։

ՏՕՆ ՍԱԼԻՍԹ

(ակռաները դրչենալով ու գրիչ մը ներկայացնելով ենոր ։)

Տէր նա ,
Ի՞նչ կ՚արժէ թագ մը ։ Եւ երջանկութիւն

Անձին կը չահիք թէ 'զպահ կորսունէք ։
Իմ օրեանքս ամեն դուրան են մընացած ։
Հոս անցածներէն գլուցօզ մարդ չը կայ ։
Այս ամենը մեր երեքնուս մէջ է ։

(Գրնէն ենոր մոտվընուն ձեզը խօսիլ փորձելով, և
ենէ ո՛չ եաթ կը հրէ ո՛չ ալ կը քաշէ ։)

Է՛յ, կեանքը աւանկ ։

(Թաղուհին՝ վարանելով ու մոլորելով՝ անոր երեսը
կը նայի անդիսուելուվը)

Թէ չ'ըստրապրէք,
Պուք ձեզի ինքնին կրնաք հարուածը ։
Գայթակղութիւն մեծ, արգելքն ի վանք ։

ԹԱԳՈՒՀԻՆ (ընկճեալ)

Ո՛վ Աստուած ։

ՏՕՆ ՍԱԼԻՍԹ (ցոյցնելով ընդունելու պատը)

Սէզար ըզ ձեզ կը սիրէ ։
Ձեզի արժան է ։ Պատուիս վրայ կ'ըսեմ՝
Խիստ մեծ տոհմէ է, իշխան մը գրեթէ ։
Սեպուհ մ'որ ունի աշտարակ ընդ դարն
Եւ դիւրն ապարակ ։ Օրմէտոյ դուքս է,
Պազան, նաեւ իսկ Ըսպանիոյ աւագ ։ ։ ։

(Մոգոպլինը վրայ կը հրէ ընգուհոյն ձեռքը. էնէ շուտ-
եալ ու պոպոլոն կոբեր կը պատրաստվի ըսպասելու։)

ՈՒՅ ՊԼԱՍ (էջը ընդոստ գալով)

Ուշ Պլաս է անուշս, եւ ծառայ մըն եմ ։

(Իջելով ընգուհոյն ձեռքէն գրնէն ու մոգոպլինը
'ղալ կը պատրաստի ։)

Մի ըստրտպրէք , տիկին : — Վերջապէս : — Խեղդըվէի կոր :

ԹԱԳՈՒՀԻՆ

Ի՞նչ կ'ըսէ Սէզար ,

ՈՒԻՅ ՊԼԱՍ (պապտռտծանը վրայէն վար ձգելով ա-
պահանջէյնին էրէնռալով, ատառնչ ատրբէ :)

Կ'ըսեմ թէ՝ Ուիյ Պլաս է իմ անունըս ,
Եւ ես այս մարդոյն ըսպասաւորն եմ :

(Տօն Սալոմեայ դառնալով)

Կ'ըսեմ թէ՝ հերիք այսքան մտանութիւն ,
Եւ թէ՝ չեմ ուզեր իմ երջանկութիւն , —
Շընորհ (1) : — Ա՛հ , ի զուր խօսեցաք ինձի
Դուք ականճս ի վար : — Կ'ըսեմ թէ՝ ժամ է
Արդէն որ ես ես զարթնում վերջապէս ,
Թէպէտ ամենուսա կամ պարսաւանդեալ
Այն ձեր քաղցեալի խարդաւանաց մէջ ,
Եւ թէ՝ ալ ասկէ անդին չըլ տ'երթամ ,
Եւ թէ՝ մենք մեզի երկուքնիս , տէր իմ ,
Գարչ միաանութիւն մը կը գոյացնենք .
Ես հպարտանս ունիմ ըսպասաւորին ,
Եւ դուք՝ ըզ հոգին :

ՏՕՆ ՍԱԼԻՍԹ (ընգուհոյն՝ պաղ ձեւով)

Իրաւ այս մարդն իմ
Ըսպասաւորս է :

(Ուիյ Պլասայ՝ պէրսէկան ձեւով)

Մի եւրա բաւ մը :

---

(1) merci.

ԹԱԳՈՒՀԻՆ (Զբ պիմանալով վերջապէս՝ յուսահատական
գուչեան տ'ալբնէկելով և ինովին ուրեմով :)

Ամպամբ երկինք :

ՏՕՆ ՍԱԼԻՍԹ (շարունակելով)

Միայն՝ խիստ շուտ խոտելու :

(թեւերը կուրծքին վրայ կը ծեփէ ու ինչ կը կանգնի ,
սրտատեան յայնով մը :)

Էյ հիմա ըսէնք , բանանք բերանիս :
Ինչ ալյմի , այլ հերիք այսչափով վրէժը
Առեալ բաւական՝ ոխերս յարեցաւ :

(Ընդոհոյն)

Հաւնեցայք հիմա : Ա՛հ , ինչ գեղեցիկ
Նիւթ քահքահական Մաորիտայ համար :
Ա՛հ , իս պաշտօնանկ (1) ըրիք դուք , չ'է սի .
Ես ձեզ գահընկէց (2) կ'ընեմ՝ ոխ՝ հիմա :
Ա՛հ , իս աքսորել միայն կրցաք դուք .
Ես ձեզ կ'վաընտեմ՝ ոխ՝ ու կը պարծիմ :
Ա՛հ , դուք ինծի կին ձեր ըսպասուհին
Առաջարկեցիք .

(Խոհուն կը ձեձապէ)

Իսկ ձեզմէ ես իմ
Ըսպասուհիս տուի հրամանել :
Կրնաք նաեւ իսկ կարգվիլ անոր հետ ,
Անշուշտ , զի մերձ է արքային վախճան : —
Իւր սիրտը կ'ըլլայ ձեզմի գոնձ ամբառ :

(կը ձեձապէ)

Ի գուր չէք ըլլար ըրած ՝զանխ գուքս ,
Գուք ալ գքսուհի կ'ըլլաք վերջապէս :

---

(1) destitué. (2) détroné.

(պղտանելը կը ցրտի)

Ա՜հ, իս վշտերկիր, խայտառակ ըրիք,
Ամէն տակ տուք ու հանդիստ գնացեր
Կը ննջէիք դուք՝ ձեզի խեղդ ըզ ձեզ։

(Ջայլ խօսած ատեն՝ Ուլայ Պլաս գնաց խոտի պրտած նիֆը
տղէն. յետոյ յանկարծակի տ'եկաւ խրեներն մօրեցաւ՝
առի՛ր ինդը զը պեռանելով։ Յորժամ պօն Սալտոն խօսէը
կ'աւարտի՝ ապելտան յոխորտ ալէը շէշտելով ընտքուհոյն
վրայ որ է դէտ պարչած է, յայնժամ Ուլայ Պլաս մարէքեն առաջն
էրախտակելն կը քաշէ ու յանկարծ ի՛զանի ընտքով կը տաշէ։)

ՈՒԼԱՅ ՊԼԱՍ

(Տօն Սալտոյ առաջը ձեռքը, ահագին կերպով ու յայնով։)

Թշնամանեցիք կարծեմ ձեր դշխոյն։

(Տօն Սալտոն խոհոյն պէտ է պառաջը կը վազէ։
Ուլայ Պլաս անոր առջեւը կը կոխէ։)

— Օ՜, մի այդ կողմը վազէք վայրապարո՛,
Շաւուց ես արդէն նիզակը դըրած եմ։ —
Մարքի, Սաղայէլ ցարդ քեզ պաշտպանեց,
Բայց եթէ կ'ուզէ կորզել քեզ ձեռքէս՝
Հիմա թող ելլի երեւնայ դէմըս։
— Կարդն իմս է. — 'զօձն ուր ուրեք հանդիպի
Մարդ կը ջախջախէ։ — Ոչ ոք կրնայ ներս
Մանել, ոչ մարդիկդ եւ ոչ իսկ դըժոխք։
Ըզ քեզ վրիվրեցին յորսայս ի գետին
Բռներ եմ վակժոյժ՝ ճնշեալ անողոք
Ես իմ սա երկաթ գարշապարիս տակ։ —

(Ընտքուհոյն)

— Այս մարդը՝ տիկին, ձեզի ըրեանէ

Իշխէր կոր խօսիլ ։ Բացատրեմ ձեզի ։
Ատոր քով հոգի չ՚ք ամենևին ,
Հրէշ մըն է ։ Երէկ՝ իր ծիծաղներով
Իս հեզձամըղձուկ ճայթեցընէր կոր ։
Սիրտս ըրաւ ճըմլիկ ճըղմիկ ըստ հաճոյս ։
Ինծի պատուհան մը գոցել տուաւ ։
Ձեռքը մարտիրոս չարչըրվէի կոր ։
Պաղատանք , արցունք , չ՚եմ կրնար ըսել ։

(Տարբերակ)

Պահ մ՚առաջ հոսա ձեր տրտունջներով
Ո՛ւմ կը համբէիք ։ Ձի տի պատահան
Տամ ձեր պատճառաց , նա եւ իսկ — առնք
Ես չը հասկըցայ ։ — Ա՛յ , թշուառական ,
Կը համարձակիք դուք — ձեր թագուհին՝
Պաշտելի կին մը , կը համարձակիք
Նախատել ՚զէնի երբեր ես հոս եմ ։ —
Կը զարմանամ ես իրաւ այն խելքին
Խելացի կարծուած ձեզի պէս մարդուն ,
Որ մտքէ կ՚անցնէք թէ ես անբարքոտ
Տի կենամ նայիմ որ ընէք դուք ՚զայդ ։ —
Իս նայեցէք տխուր , երբեր մանուիչ մը՝
Խաւարաչքերվիկ օճապըտոյտ մը՝
Ո՛րն որ եւ ըլլայ իր չերվանակը ,
Անուր ու ճիւաղ ոճիր մը գործէ ,
Ամեն մարդ՝ գոհիկ թէ աղնըւական ,
Ունի իրաւունք՝ իր ճամբին վերայ ,
Գալ թ՚քնել անոր իր դատակնիքը
Երեսն ի վեր վար , ու առնուլ սուր մը ,
Սակուր մը , դանակ . . . — Ատուածդ Ատուածդ իմ ,
Եղայ ապաստար , դահիճ ըլլամ ինչ ։

ԹԱԳՈՒՀԻՆ

Չը տէ մանչիք ա՛յարիւն այդ մարդուն։

ՈՒՅ ՊԼԱՍ

Դաւն է ինձ՝ տիկին, ձեր ներկայութեան
կատարել պաշտօնս. այլ այս տեղ հարկ է
հեղձնուլ այս գործը։

(կը մղէ ըղձօն Սալոմէ պէպ է խոյզը։)

Եւս բերնէս՝ տիար,
Մատիք անդր ինձ պատճառ ալօթիւ՝ վաստաճ։

ՏՕՆ ՍԱԼԻՍԹ

Ընդհանութիւն է։

ՈՒՅ ՊԼԱՍ

Իրաւ մի կ՛ըսես։

ՏՕՆ ՍԱԼԻՍԹ

(Ձինուխ, և կապտոյն հայուածք մը նետելով շուրջը։)

Սա պատերազմն վրայ չէք եւ ոչ մէկ գիտնք։

(ՈՒՅ ՊԼԱՍԻ)

Սուաքր մը գոնէ։

ՈՒՅ ՊԼԱՍ

Մարդի, կատակ է։
Տէր իմ, ես միթէ ոտանաւոր եմ մի։
Մէնաճարտ, ճն անդր. ձեր որեանց մէկն եմ,
Ան որ ըրտւսպ չոկէն՝ կարմիր կամ սպիտ
Շերտեալ հագուստով, անարդ եւ նկուն
Ձիք արարած մը՝ զոր դուք կը ծեծէք
Փետուէք անխընայ, — եւ որ կ՛ըսպաննէք։

Այո՛ ու ապանեմ ըզ քեզ չարաչար՝
Վըտեմափայլ տէր , կը լսես յըստակ ,
Իբրեւ անանձուն , զազիր , պարշելի ,
Վատ արարած մը , իբրեւ չմն սատակ ։

ԹԱԳՈՒՀԻՆ

Թողուբթիւն անոր ։

ՈՒՅ ՊԼԱՍ (թագաւորոյն կ՚ուպղէ խօսքը , բռնելով ըզպօճ Սալոսի օձէքէն ։)

Տիկին , հոս անձիւր
Անձամբ կը լուծէ ՚զիւր ոխն ու վըրէժ ։
Ալ չ՚է կարեւի որ դէշն ազատի
Չեռամբ հրեշտակին ։

ԹԱԳՈՒՀԻՆ (է ձառնը ՚ԻՀԵԼ)

Գըթութիւն անոր ։

ՏՕՆ ՍԱԼԻՍԹ (կանչելով)

Օգնութիւն , հասէք , մարդասպանութիւն ։

ՈՒՅ ՊԼԱՍ (ՙուրը վեր վերցնելով)

Շընչեա կոր դեռ , պիղծ ։

ՏՕՆ ՍԱԼԻՍԹ

(Ապտակով ՈՒՅ ՊԼԱՍՈՅ վրայ ձեռվելով ։)

Անպատուա կը մեռնիս ,
Սադայէլ ։

ՈՒՅ ՊԼԱՍ (՚ղանկ մղելով խօսքին դէմ)

Պատժուիլ կը մեռնիս ։

(Կ՛անէբե՛ւ խոցքն ըէՀ ոբոյ պոո՛ւբ կԷ գոյժէ վբանքն :)

ԹԱԳՈՒՀԻՆ

(Մինակ ծնօցած , կէսօրէ ընկնելով ալեւոքն վբայ :)

Երկմինք :

(Պահ լռութիւն : Յետոյ ուշ պլաա կոա գայ նէբա՝ գոռնալիակ , սրտանց սոսկի :)

Գ· ՏԷՍԻԼ

ԹԱԳՈՒՀԻՆ , ՈՒՅ ՊԼԱՍ

(Ուշ պլաա գռանգաւէլով էանի մը էայլ կ՛սրանօա պէէպ է ընգգուհին ոբ ծնօցէբ է անշարժ սա ընդքաժ սոսկաժ . յետոյ երկօա ձնկան վբայ կ՛ընկնէ՝ ակընկոբ , որպէս ըէ չէբ համարձակէբ ամբաստանալ ոչխին մինչեւ ցբ ընգգուհին :)

ՈՒՅ ՊԼԱՍ (ձանբ սա ցած ձայնով)

Արդ պէտք է՝ ամէնքին , ձեզ խոստովանիմ :
— Չէ ոմ մեղաւոր : — Անկեղծ կը խօսիմ .
Չ'եմ ես յանցաւոր ձեր կարծածին չափ :
Կ'ըզգամ՝ ինչպէս որ կը սեանէք եւ դուք ,
Իմ խաբէութիւնս որքան սոսկալի
Տ'երեւնայ ձեզի . . . Դիւրին չ'է պատմել :

Բայց սակայն քնաւին հոգիս չ'է վաստիար ։
Ուղիղ եմ ի քնէ ։ — Սէրն իս մոլորուց ։
Չեմ 'զիս պաշտպանեմ , գիտեմ լաւ՝ պէտք էր
Ձար մը գտնէի ։ Մեղքը գործած է ։
— Սակայն ճշմարիտ՝ տեսիք հա՝ որքան
Սիրեցի ես Ձեզ ։

ԹԱԳՈՒՀԻՆ

Տիար . . .

ՈՒՅ ՊԼԱՍ (Դիշտ է Ձոանը)

Մի երկընչիք ·

Չի տի մերձենամ ։ Կեա առ կեա ամեն
Եղածն ըսեմ Ձեր վեհափառութեան ։
Ո՛հ , հաւատացէք ինձ , հոգիս չ'էր վաստիար ։ —
Օրն ի բուն այսօր վազեցի թափառ
Դաղքին մէջ ասդին անդին խեղդի պէս ։
Շատ տեղ ալ մարդիկ ինծի նայեցան ։
Այն Ձեր հաստատած հիւանդատան քով
Ձասպաղ ըզգացի՝ ցնորիցըս միջեւ ,
Աչխարհիկ կին մը որ անբարբառիկ
Կը սրբէր ճակտէս իջած քրտինքը ։
Գըթացէք ինծի , պատուի կոր սիրտըս ,
Ասուած ։

ԹԱԳՈՒՀԻՆ

Ի՞նչ կ'ուզէք ։

ՈՒՅ ՊԼԱՍ (Յեռվին դիտելով)

Ներում ինձ , տիկին ։

ԹԱԳՈՒՀԻՆ

Երթէք ։

ՈՒՅ ՊԼԱՍ

Երթէք ։

(Կ՚ելլէ ու՝ յաջրափայլ դէպ ի սեղանը կ՚երթայ ։)

Ո՞չ երթէք ։

ԹԱԳՈՒՀԻՆ

Ո՛չ, երթէք ։

ՈՒՅ ՊԼԱՍ (Սեղանէն վերայէն կ՚առնու սրտաճկը շրխանոցը կը փաթթէ և ջիկ ուժգով կը պարպէ՛ զանէ ։)

Մարէ, բոց տըխուր, մարէ ։

ԹԱԳՈՒՀԻՆ (Երկերով ու անոր վազելով)

Ի՞նչ կ՚ընէ ։

ՈՒՅ ՊԼԱՍ (սրտաճկը պեղը դնելով)

Ոչինչ ։ Վերջացան վիշտերըս ։ Ոչինչ ։
Կ՚անիծէք դուք զիս, կ՚օրհնեմ ես ըզ ձեզ ։
Աստղիկ եղածն, աս՛ է ։

ԹԱԳՈՒՀԻՆ (պակասցեալ)

Տօն Սէզար ։

ՈՒՅ ՊԼԱՍ

Երբոր կը խորհիմ՝ հէք հրեշտակ, թէ՛ զիս
Սիրեցէք երբեմն ։

ԹԱԳՈՒՀԻՆ

Ի՞նչ այդ օշարակ

Օտար ։ Ի՞նչ ըրիք ։ Խօսէ, ուր լինծի
Պատահիան, Սէզար, կը նեղուիմ քեզի,
Կը սիրեմ ըզ քեզ, կը հաւատամ քեզի ։

ՈՒՅ ՊԼԱՍ

Ուշ պլաս է անուշնա ։

ԹԱԳՈՒՀԻՆ

(քաղաքներովը ՝ջանի պարսրեըվ)

Ո՞ւշ պլաս , կը նեըրեմ
Չեզի եա , բայց դուք ինչ ՝ըրիք հոդ ։ Խօսէք ,
Հրամեմ կոր քեզի , լսենա կոր Ո՞ւշ Պլաս ։
Թոյն չ՝է հա այդ ժանտ ըմպելիքն՝ ըսէ ։

ՈՒՅ ՊԼԱՍ

Հա , թոյն է , այլ իմ սիրտըս ցընծուն է ։

(Գլուխ կ՝ընալով ըշխատուհին արտօնուածը
և աչքին երկնո+ վերցնելով ։)

Շնորհէ , Ըէն անեղ , արդար վեհապոյն ,
Որ հէք սա ծառայն օրհնէ սա դշխոյն ·
Զի մըխիթարեց սիրտ խաչեցելոյս ,
Ի կեանս՝ իւր սիրուհի · գըթութիւն՝ ի մահուս ։

ԹԱԳՈՒՀԻՆ

Թոյն մի , Ըէն անեղ , ոհ , ես մեռուցի ·
Մեռնիմ արեւուդ , կը սիրեմ ես քեզ ։
Թէ որ նեըրէի · · ·

ՈՒՅ ՊԼԱՍ (Ընդհատելով)

Նոյնը կ՝ընէի ։

(Ձայնը կը մարի ։ Թագուհին ՝ջանի իր բոպիկ
վրայ քաշելու կը ջանի ։)

Ա՛լ չէր կրնայի ապրիլ ես ։ — Առէն ։

(փոխում ցոյցնելով)

Ահ փախչիք սրկէ : — Ամէն բան ծածուկ
Տի մնայ : — Մեռնիմ կոր :

(Կ՚ընդնէ)

ԹԱԳՈՒՀԻՆ

(Անոր մարմնոյն վրայ նէթվելով լալագին հառաչանօք)

Վա՛յ ինձ, ուր պիտի :

ՌՒԻՑ ՊԼԱՍ

(Ու դառնէր կոր, կ՚արդելուցնայ ընթացողն կոչելը
և իր անուանն ինոր քրնէն արտասանել :)

Շրնորհ :

(Կ՚ընդնէ վարագոյրը :)

ՎԵՐՋ

ԻՂՋ ԹԱՐԳՄԱՆՉԻՆ

Լուսաբեռ դարուս մէջ ու՛ր կ՚ապրինք՝ ժողովրդային կրթա-թեան ապա- և բնա-բաւութեան միջոցն է թատրը. չափահասից պակաց մը՝ ու՛ր հրահանգը ծպտեալ է զուարճութեան ակնախըտիղ քօղին տակ: Թատրասէրին բարձրէն՝ իբր քարտաւազէ մը՝ հեշտ կարկաջմամբ կ՚իջնի ցիր ու ցան գեանոպարկին վրայ ալեակն խմնատից, որ կը բերէ՝ բարոյական դաս, կենցաղօգուտ խրատ, գրական ու գեղարուեստական ճաշակ. ուստ անձնուր հանդիսական կ՚առնու իր մնան ու կը տանի կը ծաւալէ իր ընտանեաց ծոցը: Այսպէս ըմբռնեալ թատրայնն զբօսանաց նպատակը, ուրախութեամբ կը տեսնենք ազգայնոց այս մնասին նոր արթընցած ախրը: Փա՛ռք այն ազգասիրաց որ սոյն գործմանէ շարժեալ՝ պաշտպան և ձեռնընտու կը հանդիսանան թատրական հաստատութեանց: Երանի՛ թէ ազգային Վարչութիւնն ալ ուզենար յօգուտ վարել ընդհանուր դաստիարակութեան այս հզօր օժանդակը:

Սոյն այս կրթարար նպատակին փոքր ինչ ծառայած ըլլալու առնչն է որ արուեցաւ մեզ ձեռնարկել այս թարգմանութեան, և ճակատել մեր տկարութիւնը երկու լեզուաց դժարութեանցն յանդիման: Մեր գործածած գրական ոճը՝ զոր անբատպելւոյն կարծելէ շատ հեռի ենք, գիտենք ազէկ շատ ունի քննադատներ, մանաւանդ հայկաբանից խումբ մը և իրենց կուսակիցները, որք գրաքառէն առնելով միշտ փաստերնին զարշհարհատրը կ՚անդամանեն, և որք՝ իբր թէ հնոյ ճաշակ ճակացեալ այս արդի լեզուն ժխտումն է հնոյն կամ հայկաբանութեան սպանիչը, և իբր թէ մի և նոյն հայ ցեղին բարբառը չէ, չեն կրնար հաշտ աչօք տեսանել արմենաբանութեան աշխարհակալութիւնքը, և ուրանալ իսկ կ՚ուզեն զանի: Ատոնց բանելիք չունինք. մեր յոյսը՝ այդպիսեաց ընդունել տալ չէ մեր գրութիւնը: Կը յարգենք քննադատելու իրաւունքնին, յարգեն թող գրելու ազատութիւննիս: Բանաւոր փառք մը միշտ հաշակելու է, փոյթ չէ եթէ ներկան չընդունի զանի. ապագան կեցած է, ժամանակին կիրթիլ ուռխտագաշարումներէ ազատ՝ կու տայ իր վճիռը:

Մենք համոզեալ ենք առ ճշմարտութեան. — ժողովուրդի մը համար չիք յառաջադիմութիւն՝ թէ բարոյական և թէ նիւթական՝ առանց մնայնի միակութեան, չիք մնայնի

մշակութիւն առանց գրականութեան, և գրականութիւնն ԱՄՈՒՏ է ուր որ ժողովուրդ և գրականք մի և նոյն լեզուով չեն խօսիր, կամ՝ որ նոյն է՝ գրականք մարց խօսած լեզուով չեն գրեր: Մեծ է զօրութիւն մայրենի լեզուին, զի մարք են մարդկային լեզուաց իրենէ ուսուցիչները. էնոնցմէ կը ծնի լեզուին ոգին, և գրականացմէ կ'առնու իր զարդն ու հարբուսուութիւնը: Ըսա մեզ՝ ազգի մ' ընկերական վիճակը զոյգ կ'ընթանայ իր գրական վիճակին հետ, անանկ որ՝ գրականութիւնն ամեն ուժգ ստուիճանացոյց կրնայ նկատվիլ ընդհանուր յառաջադիմութեան: Խորին է այս համոզումնիս. ուստի և մեր խարխափանքը ռամիկ լեզուին մէջ՝ ժողովրդային գրականութեան մը գալուստն աճապարելու եռանդն է, և ոչ յաւակնութիւնը: Արդէն ըսած ենք, նոր գրիչներէն կ'ապասենք մենք և նորակիրթ մայրերէն՝ որ դպրոցներէ ելլելու վրայ են, այս գրական յեղափոխութեան պատկումը, որ տի հանդիսանայ արմենագանութեան այսինք մեր գործնական լեզուին գրականօրէն մշակմանն ու աշխարհօրէն ճաւալմանը: — Չնա է մեր յոյսը, բոլոր մեր ակնկալիքը. զի հաւատ ունինք ապագային, զի հաւատ ունինք յառաջադիմութեան:

Իսկ գալով մեր առօրեայ ընդդիմադրանքից, կը մխիթարվինք տեսնելով թէ մեր թարգմանած հեղինակն ալ իր գրական նոր ոճին համար քիչ չը դատափետվեցաւ, բայց վերջապէս յաղթանակեց իր դպրոցը: Անապարծութիւն չը մեկնվի՛ ըսածնիս. մեզ ճանաչող ամենուն հետ մենք ալ գիտենք մեր հիւլէական ոչընչութիւնը այնպիսի հեղինակի մը տիեզերահռչակ տաղանդին առջեւ. բայց ներվի՛ մեզի մի և նոյն զգացմամբ յիշել հոս ի ճահ՝ նոյնանման պարագայէ ներշնչեալ այն անանուն քերթօղին սա քանի մը տողերը, 'զոր մեր մտերիմներէն մէկը՝ գեղատուռէ սիրահար՝ գեղեցիկ թարգմանած է. —

« Բառ մ'ալ, եղբայրք, — և կը գոցեմ յաւիտեան
« Ա.յսուհետեւ մըտացս օտար այս մտաւոն:
« Չը՛ տի լըսեմ մարդիկ ինչ որ ալ ըսեն:
« Աղբեր ինչ փոյթ ջըրերն իր ափ կը վազեն:
« Եւ ինչ փոյթ ինձ՝ ընդ ապագայն յառելոյս՝
« Թէ խամրաշունչ հոնձ այն աշնան ընդ որ կոյս
« Կ'անցնի կ'երթայ, բարձեալ ի թեւս իւր Ներեր
« Թէ գօս սերնեւ Թէ քերթօղին հէք տողեր: »

(ԱՇՆԱՆ ՏԵՐԵՒԻՄ)

Բէյրութ, 5 Հնձոր 1873. Ռ.

Գին — կէս մեճիտ

5053
5054
5055

ՀՀ Ազգային գրադարան
NL0001220
ՀՀ Ազգային գրադարան
NL0001219
ՀՀ Ազգային գրադարան
NL0001218